ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ (IFB)

Հայաստանի Հանրապետություն

Հարկային վարչարարության արդիականացման ծրագիր

ՎԱՐԿ No. 5114-ԱՄ

Տվյալների մշակման կենտրոնի համար լրացուցիչ զովացման համակարգերի ձեռքբերում

NCB No: TAMP-G-1.14

1. Հայաստանի Հանրապետությունը վարկ է ստացել Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկից «Հարկային վարչարարության արդիականացման ծրագրի» ֆինանսավորման համար, եւ նպատակ ունի օգտագործել այս վարկային միջոցների մի մասը Տվյալների մշակման կենտրոնի համար լրացուցիչ զովացման համակարգերի ձեռքբերման, TAMP-G-1.14 պայմանագրի շրջանակներում վճարումների իրականացման համար:

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն և ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ն սույնով հրավիրում է պահանջներին համապատասխանող և որակավորված հայտատուներին ներկայացնել փակ հայտեր՝ **Տվյալների մշակման կենտրոնի համար լրացուցիչ զովացման համակարգերի ձեռքբերման համար:**

3. Մրցույթը կանցկացվի «ՎԶՄԲ Վարկերի և ՄԶԸ վարկերի շրջանակներում ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնումների վերաբերյալ» ՀԲ ուղեցույցների շրջանակներում Ազգային մրցակցային մրցույթի (NCB) ընթացակարգերի համաձայն (2011թ-ի հունվար) և հայտ կարող են ներկայացնել Ուղեցույցների շրջանակներում սահմանված պահանջներին համապատասխանող բոլոր հայտատուները: Ի հավելումն, խնդրվում է հղում կատարել կետեր 1.6 և 1.7-ում Համաշխարհայի նբանկի՝շահերի բախման վերաբերյալ քաղաքականությանը:

4. Հետաքրքրված թույլատրելի հայտատուները կարող են հետագա տեղեկատվություն ստանալ ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ից և ստուգել Մրցութային փաստաթղթերը 09:00-18:00-ը տեղական ժամանակով ստորև ներկայացվող հասցեով:

5. Հետորակավորման պայմանները ներառում են՝

<u>(ա) Եթե Հայտատուն արտադրող է.</u>

(i) Ֆինանսական կարողություններ

Հայտատուն պետք է ներկայացնի փաստաթղթային վկայություն առ այն, որ դա համապատասխանում է հետևյալ ֆինանսական պահանջ(ներ)ին:

- Պահանջված նվազագույն միջին տարեկան շրջանառությունը վերջին երեք (3) տարվա համար (այսինքն 2013, 2014, 2015 թթ.) պետք է լինի հայտի արժեքից երկու (2) անգամ ավել:

- Հայտատուն պետք է տրամադրի իր ֆինանսական հաշվետվությունները վերջին երեք (3) տարիների համար (այսինքն՝ 2013, 2014, 2015 թթ):

(ii) Փորձ և տեխնիկական կարողություն

Հայտատուն պետք է ներկայացնի փաստաթղթային վկայություն առ այն, որ դա բավարարում է օգտագործման հետևյալ պահանջ(ներ)ին.

- նմանատիպ ապրանքների արտադրման և մատակարարման ու տեղադրման նվազագույնը հինգ (5) տարվա փորձ:

- Վերջին հինգ (5) տարվա ընթացքում (այսինքն 2013, 2014, 2015 թթ.) համանման արժեքի և բնույթի առնվազն մեկ (1) հաջողությամբ իրականացված պայմանագիր՝ նշելով գնորդին, պայմանագրի գինը և մատակարարված ապրանքներն ու ծառայությունները:

<u>(բ) Եթե Հայտատուն արտադրող չէ.</u>

(i) Ֆինանսական կարողություններ

Հայտատուն պետք է ներկայացնի փաստաթղթային վկայություն առ այն, որ դա համապատասխանում է հետևյալ ֆինանսական պահանջ(ներ)ին:

- Պահանջված նվազագույն միջին տարեկան շրջանառությունը վերջին երեք (3) տարվա համար (այսինքն 2013, 2014, 2015 թթ.) պետք է լինի հայտի արժեքից երկու (2) անգամ ավել:

- Հայտատուն պետք է տրամադրի իր ֆինանսական հաշվետվությունները վերջին երեք (3) տարիների համար (այսինքն՝ 2013, 2014, 2015 թթ.):

(ii) Փորձ և տեխնիկական կարողություն

Հայտատուն պետք է ներկայացնի փաստաթղթային վկայություն առ այն, որ դա բավարարում է օգտագործման հետևյալ պահանջ(ներ)ին.

- նմանատիպ ապրանքների մատակարարման ու տեղադրման նվազագույնը հինգ (5) տարվա փորձ:
- Վերջին հինգ (5) տարվա ընթացքում (այսինքն 2013, 2014, 2015 թթ.) համանման արժեքի և բնույթի առնվազն մեկ (1) հաջողությամբ իրականացված պայմանագիր՝ նշելով գնորդին, պայմանագրի գինը և մատակարարված ապրանքներն ու ծառայությունները:

6. Հետաքրքրված հայտատուները հայերեն լեզվով ամբողջ մրցութային փաստաթղթերի փաթեթը կարող եք ձեռք բերել ներքոհիշյալ հասցեով գրավոր դիմում ներկայացնելուց եւ 20,000 ՀՀ դրամ գումարի անհատույց վճարում կատարելուց հետո: Վճարման ձեւն է՝ վերոնշյալ գումարի փոխանցումը ԱՖԾԿԿ-ի ստորեւ նշված հաշվի վրա: Փաստաթղթերի տպված տարբերակը կհանձնվի Հայտատուի ներկայացուցչին: Ի հավելումն տպագիր տարբերակին, փաստաթուղթը նաեւ անհրաժեշտության դեպքում կուղարկվի էլեկտրոնային տարբեակով:

   Մրցույթային փաստաթղթերի ամբողջական փաթեթը կարող է անվճար բեռնվել նաև www.gnumner.am (http://gnumner.am/am/category/129/1.html) կայքից: **Այնուամենայնիվ, ԱՖԾԿԿ ՊՀ-ն պատասխանատու չէ վերոնշյալ կայքից սխալ կամ ոչ ամբողջական բեռնման, ինչպես նաև հետագայում մրցույթային փաստաթղթերի փոփոխությունների առկայության դեպքում դրանց բացթողման համար:**

   Տպագիր եւ էլեկտրոնային տարբերակների միջեւ անհամապատասխանության դեպքում կգերակայի տպագիր տարբերակը:

Հաշվեհամարի տվյալներն են.

Շահառու՝ ՀՀ ֆինանսների նախարարության <<Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն>> ՊՀ

Հարկային կոդը՝ 180255188

Ստացողի բանկի անունը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարան

Հաշվեհամար՝ 900000900564 (ՀՀ դրամ)

7. Հայտերը պետք է ներկայացվեն ստորեւ նշված հասցեով, մինչեւ **2016 թ. հունիսի 30-ը՝ ժ. 15:00 (տեղական ժամանակ):** Հայտերը չի թույլատրվում ներկայացնել էլեկտրոնային տարբերակով: Ուշացված հայտերը կմերժվեն: Հայտերը կբացվեն

հայտատուի ներկայացուցիչների ներկայությամբ **2016 թ. հունիսի 30-ին՝ ժ. 15:00 (տեղական ժամանակ):**

8. Բոլոր հայտերը պետք է ուղեկցվեն 1,200,000.00 ՀՀ դրամ գումարի չափով մրցութային երաշխիքով:
9. Վերոշարադրյալ հողում կատարված հասցեն հետեւյալն է՝

պրն. Էդգար Ավետյան
Գործադիր տնօրեն
«Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն»
ՊՀ ԱՖԾԿԿ
ՀՀ ֆինանսների նախարարություն
Տիգրան Մեծի 4, 3-րդ հարկ, սենյակ N 2
Երևան, Հայաստանի Հանրապետություն
Հեռ՝ (+374-11) 910 581
Ֆաքս՝ (+374-10) 528 742
Էլ. փոստ՝info@ffpmc.am

Web site: www.gnumner.am

(http://gnumner.am/am/category/129/1.html)